ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԸ ՈՐՊԷՍ ՍՏՈՐԻՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ[1] ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՌՈՂ ՈՒ ՄԵԿՆԱԲԱՆ

(*Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միերի դուռ* ժողովածուի հրատարակութեան 150ամեակին առթիւ)

ՅԱՍՄԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ
hasmikgalstyan1979@gmail.com

ՄՈՒՏՔ

ԺԹ. դարի առաջին տասնամեակներից սկսած առաջաւոր Եւրոպայի մի շարք երկրներում ժողովրդական բանահիւսութեան հաւաքման եւ ուսումնասիրման հարցերն առաջնային են դառնում եւ շատ ու շատ գիտնական-բանահաւաքներ յաջորդաբար հրատարակում են բանահիւսութեան տարբեր ժանրերին վերաբերող նիւթեր ու ժողովածուներ: Այս ազդեցութեան ներքոյ հայկական գաղութներում (Վենետիկ, Վիեննա, Մոսկուա, Պետերբուրգ, Թիֆլիս եւն.) եւ բուն Հայաստանում սկսւում է հայ ժողովրդական բանահիւսութեան հաւաքումն ու ուսումնասիրութիւնը:

ԺԹ. դարը կարելի է պայմանական ընդունել, քանի որ, հայ բանահիւսութեան առաջին նմուշները տեսնում ենք պատմահայր Մովսէս Խորենացու (Ե. դար *Պատմութիւն հայոց*), Ագաթանգեղոսի (Ե. դար, *Պատմութիւն հայոց*), Եզնիկ Կողբացու (Ե. դար, *Եղծ աղանդոց*), Փաւստոս Բուզանդի (Ե. դար, *Պատմութիւն հայոց*), Ղեւոնդի, (Ը. դար, *Պատմութիւն*), Յովհան Մամիկոնեանի (Ժ. դար, *Տարօնի պատմութիւն*), Արիստակես Լաստիվերցու (ԺԱ. դար, *Պատմութիւն*) Կիրակոս Գանձակեցու (ԺԳ. դար, *Հայոց պատմութիւն*), Առաքել Դաւրիժեցու (ԺԷ. դար, *Պատմութիւն*), Զաքարիա Քանաքեռցու (ԺԷ. դար, Պա*տմագրութիւն*) եւ այլ մատենագիրների վկայութիւններում, միջնադարեան առակագրութեան մէջ՝ Մխիթար Գօշ (ԺԲ. դար), Վարդան Այգեկցի (ԺԳ.ԺԴ. դարեր):

Բանագէտ Արամ Ղանալանեանի բնութագրմամբ՝

[1] Ստորին առասպելաբանութիւնը բազմագործառութային համակարգ է ազգագրութեան եւ բանագիտութեան մէջ, որը համակողմանիօրէն ուսումնասիրում է չար եւ բարի ոգիների մասին հաւատալիքներն ու պատկերացումները: Ստորին առասպելաբանութեան մէջ են մտնում աստուածների կարգավիճակ չունեցող առասպելաբանական արարածներ, տարատեսակ դեւեր եւ ոգիներ, որոնք միջամտում կամ խառնւում են մարդկային կեանքին, հանդիպում են մարդկանց հետ, վերածւում մարդկանց:

Ժողովրդական բառ ու բանի նկատմամբ հետաքրքրութիւնը 19րդ դարի 70-80-կաններին դառնում է գիտակցուած անհրաժեշտութիւն, եւ ի յայտ է գալիս բանագիտութիւնը՝ որպէս ուրոյն ու կարեւոր մի բնագաւառ[2]:

Եւ այս բնագաւառի կայացման ու հիմնադրման առաջամարտիկը Գարեգին վարդապետ Սրուանձտեանցն էր: Բնագաւառի երախտաւորներից են նաեւ Խաչատուր Աբովեանը, Միքայէլ Նալբանդեանը, Ստեփանոս Պալասանեանը, Գէորգ Ախվերդեանը, Միքայէլ Միանսարեանցը:

Հոգեւոր հովուի եւ ուսուցչի պարտականութիւններին զուգընթաց՝ Սրուանձտեանցը խորապէս լծւում է իր ժողովրդի բառ ու բանին, կենցաղին ու սովորոյթներին, հոգեւոր ու նիւթական մշակոյթին առնչուող նիւթերի գրառմանն ու ուսումնասիրմանը: Բանահաւաքներից նա առաջինն էր, ում ուշադրութիւնից չվրիպեց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող եւ նրա կենցաղի ու առօրեայի մաս կազմող հաւատալիքները, նախապաշարումները: Նա նկատեց, որ ժողովրդի մէջ կան տարածուած բազմաթիւ սնոտիապաշտական զրոյցներ ու սովորոյթներ, որոնք կարօտ են գրառման եւ ուսումնասիրման:

ԴԵՒԵՐԻ, ԴԻՒԱՀԱՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԴԻՒԱՀԱԼԱԾՈՒԹԵԱՆ ԾԷՍԻ ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑՆԵՐԸ *ԳՐՈՅ ՈՒ ԲՐՈՅ ԵՒ ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ*

Ժողովրդի մէջ առկայ հաւատալիքային պատկերացումներին ու դրանց հետ կապուած զրոյցներին Սրուանձտեանցը չէր կարող այլ բնութագրում տալ, քան «սնոտիապաշտութիւն», «աւելորդապաշտութիւն», «անգիտաբար պահպանուող սովորոյթներ» եւն.: Նա բարձրաստիճան հոգեւորական էր, եւ որքան էլ իր մէջ կրում էր ժողովրդականը, ժողովրդական խօսքի, բառ ու բանի գրառողն էր ու մեկնիչը, այնուամենայնիւ, վերապահումներով էր մօտենում այս խնդրին: Նա համարում էր, որ գրի ու գրականութեան պակասից է, որ ժողովուրդը համատարած խաւարի ու մոլորութեան մէջ է: Երանի է տալիս այն ազգին, «*որոյ մայրերը ուսեալ են եւ անոնց զաւակներն ալ իրենց արգանդէն ուսեալ կը ծնանին*»[3]:

Սկզբնաղբիւրային նշանակութիւն ունեն բանահաւաքի գրառած զրոյցները դեւերի, դիւաբնակ վանքերի, դիւահարների ու դիւահալածութեան ծէսի մասին: *Գրոց ու բրոց*ում Սրուանձտեանցը նախ ներկայացնում է հեքիաթներում հանդիպող դեւերի ընդհանուր բնութագիրն ու հիմնական գործառոյթները: Նրա բնորոշմամբ «*Դեւը սովորաբար ժողովրդական վէպերու մէջ դիւցազնի նշանակութիւն ունի կամ հսկայի, տիտանի: Այսօր եւս եթէ յաղթող եւ հսկայ մէկի մը նկարագիրն ընեն, դեւ կամ աժտահար բառերը*

---

[2] Ա. Ղանալանեան, Դրուագներ հայ բանագիտութեան պատմութեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1985, էջ 18:

[3] Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 2*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 158:

կը գործածեն եւ միշտ այսպէս հասկցուած է, թէ դեւերը լեռներ ու այրերը կը բնակին, անլոյս գբերը, անջուր հորերը եւ անջրդի անապատները: Թէ անոնցմէ մեկը հազար մարդու կրնայ յաղթել, լեռներու չափ քարեր կրնայ վերցնել դնել, մարդու միս կ'եփեն, կ'ուտեն» եւն.[4]: Ստուգաբանելով «դեւ» բառը՝ բանահաւաքն այն համարում է «դիւցազն» բառի արմատ[5]:

1878 եւ 1879ին Սրուանձտեանցը երկու անգամ Կ. Պոլսից մեկնում է Արեւմտեան Հայաստան, շրջում գրեթէ ողջ տարածքով: Ազգագրագէտ Վարդ Բդոյեանի բնութագրմամբ՝ «*նա իր ոտքերով է գծել Հայաստանի 19րդ դարի երկրորդ կէսի քարտէզը*»[6]: Այս ուղեւորութիւնների ընթացքում հաւաքած նիւթի հիման վրայ գրում է *Թորոս Աղբար* գրքի երկու հատորները:

*Գրոց ու բրոց եւ Թորոս Աղբար*ում հեղինակը ներկայացնում է Մշոյ Սուրբ Կարապետ եկեղեցում բնակուող Կաղ դեւի, Կոնոնոսի վանքում կարասների մէջ զմռսած դեւերի բանակի, Վասպուրականի Անձեւաց գաւառի Հոգուոց Վանքի Ղուդրաթ Խաթուն դեւի մասին զրոյցները, որոնք իրենց գործառոյթներով ու բնաւորութեամբ խիստ տարբերւում են Սրուանձտեանցի նկարագրած հեքիաթային դեւերից: Հրաշապատում հեքիաթներում դեւերը սովորաբար նկարագրւում են իբրեւ երեք, հինգ, եօթ, քառասուն գլխանի հսկայ, գերբնական ուժի տէր արարածներ: Նրանք հեքիաթային բարիքների, գեղեցիկ արքայադուստրերի յափշտակողներ են, աւազակութեամբ զբաղուողներ, մարդկային ցեղի թշնամիներ: Հեքիաթներում հանդիպող դեւերի կամ վիշապների գործառոյթներն ու յատկանիշերը Սրուանձտեանցը բնութագրում է՝ ասելով. «թէ՝ անոնցմէ մեկը հազար մարդու կրնայ յաղթել, թէ՝ լեռներու չափ քարեր կրնան վերցընել դնել, թէ՝ մարդու միս կ'եփեն, կ'ուտեն, թէ թագաւորի աղջիկ կը գողնան, կը տանին իրենց կին ընելու համար եւ այդ աղջկանց առջեւ շատ անձնանուէր եւ հպատակ կը մնան»[7]: Ժողովրդական զրոյցների ենթախորքում քննուող դեւը *դեմոն* է եւ օժտուած է չար ոգիներին բնորոշ բոլոր յատկանիշերով: Դեւը ստորին առասպելաբանական կերպարներին տրուող ընդհանուր անուանում է, որն իրականացնում է չարի մարմնաւորում ընկալուող սատանայի գործառոյթները[8]: Կաղ դեւի մասին նրա գրառած վիպերգը, որի բազմաթիւ տարբերակներ բանահաւաքների կողմից գրառուեցին յետագայում, լաւագոյններից մէկն է, եւ միակ տարբերակը, որտեղ դիւամարտիկ հերոսը Գրի-

---

[4] Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 59:

[5] Նոյն, էջ 60:

[6] Նոյն, էջ 7:

[7] Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 59-60:

[8] Յասմիկ Գալստեան, «Դեւը հայ ժողովրդական սնահաւատական զրոյցներում», *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հրատ., Երեւան, 2019, էջ 186:

գոր Լուսաւորիչն է: Միւս տարբերակներում, որպէս դիւամարտիկ, հանդէս են գալիս Ս. Կարապետն[9] ու Յիսուս Քրիստոսը:

Լուսաւորիչը ժողվեց դիւան լըցեց զնդան:
Կաղ Դեւն եկաւ ասաց, եաման.
Ձիս մի դներ զնդան.
Ես կ'եղնիմ Սուրբ Կարապետու փոշեհան,
Տանիմ թափեմ Փրեբաթման,
Մինչ օր Քրիստոս գայ դատաստան[10]:

Մշոյ Ս. Կարապետ եկեղեցու Կաղ դեւի աւանդութիւնը ներկայացնելուց յետոյ Սրուանձտեանցը այն համարում է «ազգի պարզամտութեան արգասիք»: Ինչպէ՞ս կարող է սոսկ Քրիստոսի անունից սարսափող, սրբերի անունը յիշատակելիս՝ կործանուող, խափանուող դեւը (սատանան) ապրի Աստծոյ տանը եւ «Սրբոց վկայարանից» մէջ: Ցաւով ու ափսոսանքով հարցնում է, թէ վանքեր այցելող ուխտաւորներից կամ թեմականներից քանի՞սը գիտեն կամ ուզում են իմանալ տաճարների մէջ ննջող մեր ազնիւ նախնիների գերեզմանների մասին, իսկ կաղ դեւի մասին բոլորը գիտեն եւ վերջինիս չգոյութիւնն ապացուցելն ուղղակի պարապ զբաղմունք է[11]:

Յատկապէս ուշագրաւ են Սրուանձտեանցի՝ դէպի Չարսանճաք կատարած ուղեւորութեան ժամանակ դիւահարութեան եւ դիւահալածութեան ծէսի մասին կատարած գրառումները. «*Գաւառիս հայն տգէտ լինելով հանդերձ՝ իր պահքին, հաւատքին եւ աղօթքին պինդ է: Ինչպէս բնական է այսպիսի տեղեաց, կախարդական բաներու վրայ շատ կը խօսին, եւ թուղթ նայելու, գրելու շատ կը հաւատան*»[12]: Ըստ բանահաւաքի գրառումների՝ չարսանճաքցի Ֆրանգ Կարապետի հիւանդ հարսին համայնքում «դիւանական» (դիւահար) են ախտորոշում: Որոշում են, որ ջին ունի: Թիլ գիւղի մոլլային են բերում, որ ջիներին հաւաքի: Վերջինս դանակի շեղբով գետնից «հաւաքում է ջիներին» ու լցնելով եղէգի մէջ՝ զմռսում: Պնդելով, որ հաւաքել է բոլոր ջիներին՝ մոլլան եղէգը տալիս է Ֆռանգ Կարապետին, որ տանի, մի տեղ հորի եւ գումար վերցնելով՝ հեռանում է: Արդիւնքում հարսը չի բուժւում: Ներկայացնելով իր գրառած զրոյցը՝ բանահաւաքը որակում է այն որպէս «*խաբեբայ բաներ*»[13]: Սրուանձտեանցը խղճահարութեամբ է խօսում պարոն Գասպարի «զոհերի» մասին, ովքեր ախ ու վախով են անցկացնում իրենց կեանքը: Վերջինս «Գիր Սողոմոնի» կոչուող մատեանով գուշակութիւններ է անում, «բժշկում» մարդկանց, «դեւերից ազատում»:

---

[9] Ար. վրդ. Սեդրակեան, *Քնար մշեցւոց եւ վանեցւոց*, Վաղարշապատ, 1874, էջ 7:
[10] Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1*, էջ 75:
[11] Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 2*, էջ 93-95:
[12] Նոյն, էջ 388:
[13] Նոյն:

Միջնադարեան ձեռագրերում առկայ նիւթի եւ ժողովրդական զրոյցների համաձայն՝ մարդու մէջ բոյն դրած դեւերը նախընտրում են անյայտ մնալ եւ ամէն ինչ անում են իրենց անունը գաղտնի պահելու համար: Դիւահալածի համար կարեւոր նախապայման է դեւի անունը իմանալը, որպէսզի կարողանայ վերջինիս հանել կամ վռնդել մարդու միջից: Ժողովրդի մէջ տարածուած էր այն հաւատալիքը, որ «*անունը անհատի մի մասն է: Տիրել մի մարդու անուանը՝ միեւնոյն է, թէ տիրել նրա էութեան մի մասին, եւ այն տալիս է տիրողին իշխանութիւն՝ վնաս հասցնելու այդ անձին. եւ սրանից առաջանում է շատ ժողովուրդների մէջ տիրող սովորութիւնը՝ խստութեամբ ծածկել անունը*»[14]: Այս «օրէնքը» գործում է նաեւ դեւերի յարուցած հիւանդութիւնների բուժման ժամանակ: Սրուանձտեանցը մէջբերում է. «*Կոչեաց Սողոմոն զդեւսն եւ ասէ. Ասա ինձ զի՞նչ է անուն քո: Ասէ դեւն, անունն իմ Սէրլիք է, եւ մեք թուով բազում եմք: Ասէ Սողոմոն, զի՞նչ չարիք առնէք մարդոց: Ասէ՝ դեւն, մենք բնակիմք ի ջուրս եւ ի ջրհորս, հարկանեմք զմարդ եւ զարհուրեցուցանեմք, խաւարեցուցանեմք զաչս եւ ցաւեցուցանեմք զմէջս եւ զգլուխս, երեւիմք երբեմն ի ձեւ աղջկան, երբեմն ի կերպարանս անասնոց: Ասէ Սողոմոն, ասա ինձ, ով պիղծ, զի՞նչ է ճար եւ դարման այդ ցաւոց: Ասէ դեւն. Սեւ ագլոր զենուլ, արիւնով գրել զայս թլիսմ, ի ջուր դնել եւ խմել, չորս գլուխ Աւետարան կարդալ, եւ Ս. Յակոբայ մոմ վառել, եւ հարիւր ծունր դնել*»[15]: Ժողովրդի պատկերացմամբ՝ մարդու բոլոր հիւանդութիւնները դեւերից ու սատանաներից են եւ տարատեսակ մոգական հնարքներ են գործադրում բուժման համար: Բանահաւաքը նկատում է, որ, այնուամենայնիւ, «*բարեպաշտօրէն կը յայտնեն, որ այսինչ ախտով բռնուածն այնինչ վանքն երթայ, Անարծաթ բժշկաց գերեզմանը յուխտ կը խրկեն ծննդկանն, ուրքի ցաւէ բռնուողն՝ Ս. Խաչի վանքը, սրտի ցաւէ բռնուողը Նարեկ թող կարդալ տայ, եւ գլխացաւն՝ Աւետարանը եւն.*»[16]:

Սրուանձտեանցը մարդկանց «երեւակայութեան պտուղ» է համարում «աներեւոյթների» կամ «սեւ արաբների»[17], Քեղուա գետից ջուր խմելու եկած վիշապների մասին իր լսած ու գրառած զրոյցները: Ափսոսանք է յայտնում, որ իր պաշտօնը թոյլ չի տալիս գնալ այն բոլոր վայրերը (ձորեր, լեռների խորշեր եւն.), որոնց մասին անհաւանական զրոյցներ են պատմում մեծ հաւատով ու զգուշութեամբ:

---

[14] Ե. Լալայեան, «Ծիսական կարգերը հայոց մէջ», *Ազգագրական հանդէս, գ. XXI*, 1911, էջ 176:

[15] Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 2*, էջ 390:

[16] Նոյն:

[17] Նոյն, էջ 392:

ՍՏՈՐԻՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑՆԵՐԸ *ՄԱՆԱՆԱ*ՅԻ ԷՋԵՐՈՒՄ

1876ին հրատարակած *Մանանա* ժողովածուի «Համ եւ հոտ հայրենեաց» բաժնում Սրուանձտեանցը ներկայացնում է ժողովրդի նախապաշարմունքներն ու սովորոյթները: Որպէս մանանա, որպէս «Հայաստանի գազպին»՝ բանահաւաքն ընթերցողին մատուցում է իրենցից իսկ գրառած զրոյցները: Արժեւորելով բանահիւսական նիւթերի գրառման կարեւորութիւնը՝ Սրուանձտեանցը վստահօրէն ասում է, թէ «*այսպիսի գործ մը պատրաստել եւ ի լոյս ածել՝ աւելի վաստակ կ'առթէ գրասիրի մը, քան'ի նորոյ բան մը հեղինակել*»[18]: Ռաֆֆու բնորոշմամբ՝ «*Մեր գրականութեան մէջ ոչ ոք Սրուանձտեանցի չափ չէ ուսումնասիրել եւ չէ հաւաքել մեր ժողովրդական աւանդութիւնները, սովորութիւնները, մեր նախապաշարումները*»[19]:

Ստորին առասպելաբանութեանն առնչուող նիւթը *Մանանա*յում կարելի է խմբաւորել երկու հիմնական բաժիններով.

1. Զրոյցներ չար եւ բարի ոգիների մասին,
2. Ոգիների յարուցած հիւանդութիւններ եւ դրանց բուժման ժողովրդական միջոցներ:

Առաջին բաժնի մէջ կարելի է ընդգրկել ձիերի բաշը հիւսող փերիների, մեղաւոր հանգուցեալներին տանջող չար ոգիների՝ գոռնափշտիկների, դեւերի եւն.ի մասին զրոյցները: Այս բնագրերում Սրուանձտեանցը միեւնոյն ժամանակ տալիս է ոգիների անուանումների բարբառային տարբերակները (գոռնափշտի (Մուշ), գոռնադաբ (Վան) եւն.:

Երկխօսութիւնների ու անմիջական զրոյցների միջոցով[20] Սրուանձտեանցը շարունակում է պատմել, ընթերցողին ներկայացնել սատանաների ու գրողների, ջադի եւ սեւ պառւլների, դժոխքի ու դրախտի բնակիչների մասին զրոյցներ:

Երկրորդ բաժնում խմբաւորւում են ժողովրդական նախապաշարումների, չար աչքի, հիւանդութիւնների եւ դրանց բուժումների ժողովրդական տարբերակների մասին բազմաթիւ յիշատակումներ (օրինակ՝ զոյգ փոշտալը ջախտ է, յաջողութիւն գուշակող, իսկ կենտը՝ սաբր է, սկսած գործը պէտք չի շարունակել: Ճանապարհ գնացող հեծեալի գործի յաջող կամ անյաջող աւարտը գուշակում էին նրա ձիու տրամադրութիւնից եւն.): Չար ոգիների ներգործութիւնը, որի հետեւանքով մարդիկ զանազան հիւանդութիւններ են ձեռք բերում, ըստ Սրուանձտեանցի գրառումների՝ կոչւում են «աչք առնել», «չարոց պատահել», «հրեշտակակոխ լինել», «գրողի զարկած», «թալ-

---

[18] Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1*, էջ 119:

[19] Փաւստոս, «Պ. Հայկունու կրիտիկան եւ "Կայծերը"», *Մշակ*, 1883, № 144, էջ 2:

[20] Բանահիւսական եւ ազգագրական նիւթերի գրառման խմբային եղանակը կիրառեց նաեւ Աղեքսանդր Մխիթարեանցը՝ Շիրակում (Աղ. Մխիթարեանց, *Էմինեան ազգագրական ժողովածու, հտր. Ա.*, «Փշրանք Շիրակի ամբարներից», Մոսկուա-Ալէքսանդրապոլ, 1901):

կացած»[21] եւն.: Եթէ վախից առաջացած հիւանդութիւն է, ապա «վախերակ» կը բռնէ (մամիկը), կ'աղօթէ, եւ կը պատուիրէ, որ ժամը տանի, եօթն գլուխ Աւետարան կարդալ տայ վրան եւ եօթն դոյլ ժամի ջրհորէն ջուր թափէ վրան, եօթն մոմ վառէ, կամ տղու հասակի չափով մոմ մը տանի Նարեկայ, կամ Տիրամօր, կամ Ս. Նշանայ»[22]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցն առաջինն էր, ով գրառեց ստորին առասպելաբանական կերպարների՝ ոգիների մասին զրոյցները եւ հաւատալիքային դրսեւորումները ժողովրդի մէջ: Մանկուց հետաքրքրուած լինելով տարբեր պատմութիւններով ու զրոյցներով՝ յետագայում ինքն էր վերապատմում իր ընկերներին իր մեծերից լսածները:

2. Տուեց ոգիների բնութագիրը ու փորձեց բացատրել ժողովրդի մէջ դրանց առկայութեան պատճառներն ու հանգամանքները:

3. Ազգագրական տարբեր շրջաններում առկայ զրոյցների սիւժէների նմանութիւնն ու տարբերութիւնը բացատրեց աշխարհագրական եւ բնակ-լիմայական պայմանների հանգամանքով: Նրա կատարած գրառումների եւ արած հպանցիկ դիտարկումների հիման վրայ յետագայ ուսումնասի-րողները՝ Մանուկ Աբեղեան, Արտաշէս Նազինեան, Ալվարդ Ղազիեան, փորձեցին կատարել ոգիների դասակարգում՝ անտառների, ջրերի, լեռնե-րի, հողմի, ծառերի, բոյսերի, սուրբ ջրերի եւն.:

4. Տուեց միեւնոյն ոգու տարբեր անուանումները՝ ըստ ազգագրական շրջանների (Վանում գոռնադաբ, Մուշում՝ գոռնափշտիկ), կատարեց որոշ անուանումների ստուգաբանութիւն (դեւ-դից):

5. Քաջատեղեակ լինելով հայ պատմագիրների գործերին՝ իր գրառած զրոյցներին զուգադրում է պատմիչների վկայութիւնները՝ չար աչքի մասին զրոյցները ներկայացնելիս համեմատում է Երուանդի առասպելի հետ՝ մէջ-բերում կատարելով Խորենացուց, դեւերի մասին խօսելիս՝ յիշում է Պապ թագաւորին, գոռնադաբների մասին պատմելիս՝ Ղարաչորակի պատմու-թիւնը Առաքել Դաւրիժեցու պատմութիւնից եւն.:

6. Սրուանձտեանցի *Գրոց ու բրոց..., Մանանա, Համով-հոտով, Թորոս Աղ-բար* ժողովածուները դարձան այն սկզբնաղբիւրները, որից մինչեւ այսօր օգտւում են հայագիտութեամբ զբաղուող գիտնականներն ու հետազօտող-ները:

---

[21] Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1,* էջ 141, 159:

[22] Նոյն, էջ 141:

BISHOP KAREKIN SRVANTSDIANTS AS THE FIRST WRITER AND COMMENTATOR OF STORIES ABOUT MYTHICAL CHARACTERS OF THE LOWER WORLD (DEDICATED TO THE 150TH ANNIVERSARY OF THE FIRST EDITION OF THE *GROTS OO BROTS YEV SASSOONTSI DAVIT GAM MHERI DUR* COLLECTION)

(SUMMARY)

HASMIK GALSTYAN
hasmikgalstyan1979@gmail.com

Bishop Garegin Srvantsdztiants in his folk and ethnographic writings allocated a significant place to Armenian folk beliefs and prejudices. In the books he published, like *Grots Oo Brots*, *Manana* and *Toros Aghbar*, he repeatedly referred to folk stories about spirits, belief manifestations, rituals and customs.

Srvantsdztiants was the first among the Armenian folklorists who did not disregard the beliefs and prejudices that existed among the people and constituted a part of the folk's everyday life. He observed that "there are many superstitious stories and customs prevalent among the people, which long for recording and study."

Based on his written materials, Srvantsdztiants gives the characteristics of the spirits and explains the origins, reasons and circumstances of these beliefs. Furthermore, by presenting specific tales, Srvantsdztiants highlights folk beliefs about mythological characters who lived in the lower world. Scattered throughout his writings are numerous references to superstitions, the evil eye, diseases and folk versions of their cures.

Emphasizing the role of education among the common people, Srvantsdztiants attributes the variety of popular stories about spirits, living rooted beliefs and prejudices to the lack or complete absence of education among the people.